

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. Օրենքի նախագծի վերնագրում «փոփոխություններ և լրացումներ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «լրացումներ և փոփոխություն» բառերով, քանի որ նախագծում կատարվում է լրացումներ և միայն մեկ փոփոխություն:

2. 2-րդ հոդվածն առաջարկում ենք հանել:

3. 3-րդ հոդվածում հստակեցման կարիք ունի «բարեգործության հետ միաժամանակ» հասկացությունը:

4. 4-րդ հոդվածի դրույթները չեն բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 28-րդ հոդվածի առաջին պարբերության պահանջներից, որոնց համաձայն յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանցում անդամագրվելու իրավունք: Այդ կապակցությամբ առաջարկում ենք հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի «կառավարման» բառը հանել», իսկ «մարմինները» բառից հետո լրացնել «, կուսակցությունները» բառը:»:

5. 6-րդ հոդվածում «հրապարակմանը» բառն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակման օրվան» բառերով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության պահանջները:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1. 1-ին հոդվածում «17-ի» թիվն անհրաժեշտ է փոխարինել «5-ի» թվով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի և 39-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

2. 2-րդ հոդվածում «հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության պահանջները:

3. Հարկ է նկատել, որ հասարակական կազմակերպություններին նախընտրական քարոզչություն իրականացնելու իրավունքից զրկելը հակասում է «ԱՊՀ մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» 2005 թվականի մարտի 17-ին ուժի մեջ մտած կոնվենցիայի 13-րդ հոդվածին: Այդ պարագայում Սահմանադրության 6-րդ հոդվածի հիմքով կշարունակի գործել հիշյալ Կոնվենցիան:

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ`

1. Օրենքի նախագծի վերնագրում «փոփոխություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացում» բառով, քանի որ նախագծում կատարվում է լրացում, այլ ոչ թե փոփոխություն:

2. 1-ին հոդվածում`

1) «խմբագրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «բովանդակությամբ» բառով` հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները,

2) «պարբերությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասով» բառով` հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

3. 2-րդ հոդվածում «հրապարակմանը» բառն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակման օրվան» բառերով` հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության պահանջները:

Ելնելով շարադրվածից` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զե-

կուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-571-17.03.2009-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-424-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասը «կուսակցություններին» բառից հետո լրացնել «, նախընտրական հիմնադրամներին» բառերով:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել հետեյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) շահադիտական նպատակների բացառումը»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետեյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Արգելվում է բարեգործության հետ միաժամանակ նախընտրական քարոզչություն, հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչություն կատարելը»:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի «կառավարման» բառը հանել եւ մասը «մարմինները» բառից հետո լրացնել «, Ազգային ժողովի պատգամավորները, համայնքների

ղեկավարները եւ ավագանիների անդամները, ինչպէս նաեւ կուսակցությունները, նրանց
ղեկավարները եւ մշտապէս գործող ղեկավար մարմինների անդամները» բառերով:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածը 3-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ
3¹ -րդ մասով.

«3¹ . Բարեգործական կազմակերպությունը չի կարող իր միջոցները ծախսել եւ իր գույքն
օգտագործել կուսակցությունների աջակցության, ինչպէս նաեւ նախընտրական
հիմնադրամների ֆինանսավորման եւ (կամ) այլ կերպ քաղաքական քարոզություն
իրականացնելու նպատակով:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
տասներորդ օրը:

Նախագիծ

Պ-571¹-17.03.2009-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1999թ. փետրվարի 17-ի ընտրական օրենսգրքի
18-րդ հոդվածում`

1) 4-րդ մասը 3-րդ կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-րդ կետով.

«3.1. հասարակական կազմակերպություններին (այդ թվում` հայրենակցական
միություններին).»

2) 7-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Արգելվում է բարեգործություն հետ միաժամանակ նախընտրական քարոզչություն
իրականացնելը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
տասներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին**

Հոդված 1. «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. հունիսի 3-ի, ՀՕ-410-Ն օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր պարբերությամբ.

«Արգելվում է կուսակցություններին անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
«ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ**

Օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

1) արգելել հասարակական կազմակերպություններին (այդ թվում՝ հայրենակցական միություններին) նախընտրական քարոզչություն կատարել եւ ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել, ինչպես նաեւ արգելել բարեգործություն հետ միաժամանակ նախընտրական քարոզչություն իրականացնելը՝:

Հասարակական կազմակերպությունների նկատմամբ նման արգելքի սահմանումը համահունչ է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթին, ըստ որի՝ հասարակական կազմակերպությունը

շահույթ ստանալու նպատակ չհետապնդող եւ ստացված շահույթը մասնակիցների միջեւ չբաշխող (ոչ առետրային) կազմակերպության՝ հասարակական միավորման, տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ **իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջումները** բավարարելու, իրենց եւ այլոց իրավունքները եւ շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական եւ ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով: Եթե միավորումը, նշված նպատակների հետ միասին, ունի նաեւ **քաղաքական**, կրոնական, արհեստակցական **նպատակներ**, ապա **հասարակական կազմակերպություն չէ եւ կարող է պետական գրանցում ստանալ որպես հասարակական միավորման կազմակերպական-իրավական այլ տեսակի կազմակերպություն:**

2) արգելել կուսակցություններին անձամբ կամ նրանց անունից կամ որեւէ այլ եղանակով քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ² :

Նման արգելքի սահմանման անհրաժեշտությունը բխում է «ՀՀ ընտրական օրենսգրքի» **18-րդ հոդվածի 7-րդ մասից**, ըստ որի՝ նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուներին (**կուսակցություններին**) արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որեւէ այլ եղանակով քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:

Համաձայն «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի **21-րդ հոդվածի** կուսակցությունը միակ հասարակական միավորումն է, որն իրավունք ունի թեկնածուներ առաջադրել Ազգային ժողովի պատգամավորների, Հայաստանի Հանրապետության Նախագահի, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների եւ ավագանու ընտրություններում: Ունենալով նման բացառիկ իրավունք, կուսակցությունները «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի **3-րդ հոդվածի 1-ին մասին** համապատասխան՝ իրենց ընթացիկ գործունեությունը մշտապես պետք է նպատակաուղղեն հասարակության եւ պետության **քաղաքական կյանքին մասնակցությանը**, որը հատկապես դրսևերվում է հերթական ընտրություններին նախապատրաստվելու միջոցով: Դա իր հերթին ենթադրում է, որ «ՀՀ ընտրական օրենսգրքի» **17-րդ հոդվածի 7-րդ մասում** սահմանված արգելքը նպատակահարմար է տարածել նաեւ կուսակցությունների ընթացիկ գործունեության վրա:

Այլապես, գործող օրենսդրությունը կուսակցություններին հնարավորություն է տալիս քաղաքացիներին նախապես՝ մինչև ընտրությունները, անհատույց կամ արտոնյալ պայմաններով) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ տալու (խոստանալու) կամ ծառայություններ մատուցելու (խոստանալու) միջոցով շրջանցել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված արգելքը: Մեր կարծիքով նման երեւոյթներն անընդունելի են, եթե նույնիսկ դրանք իրականացվում են բարեգործության անվան տակ:

Նշված խնդիրներին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ իր **2007թ. հունիսի 10-ի ՍԴՈ -703** որոշման՝

ա) **22-րդ** մասում մասնավորապես արձանագրելով, որ պետությունը պարտավոր է այնպիսի երաշխիքներ ապահովել, որպեսզի քաղաքական ընթացիկ գործունեությունը հստակ տարանջատվի նախընտրական քարոզչությունից, բացառվի քաղաքական ու բարեգործական գործունեության միատեղումը, ընտրական գործընթացի բոլոր փուլերում կանխվի քաղաքական ու գործարար շահերի միահյուսման հնարավորությունը.

բ) **25-րդ** մասում արձանագրելով, որ ընտրական գործընթացներում կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության արդյունավետության օրենսդրական ապահովման հարցում «առկա են օրենսդրական ու կառուցակարգային թերացումներ: Մասնավորապես, վերանայման կարիք ունի ՀՀ ընտրական օրենսգրքի **18** հոդվածի **7-րդ** կետը, որը պետք է վերաբերի ոչ միայն նախընտրական քարոզչությանը, այլ ընդհանրապես կուսակցություններին արգելվի անօրինական ցանկացած գործողության կատարումը:»:

3) սահմանել դրույթ, ըստ որի նախընտրական հիմնադրամներին հատկացվող միջոցները նույնպես չեն կարող համարվել բարեգործություն³:

Նախագծում նման դրույթի սահմանումը համահունչ է՝

ա) ՀՀ ընտրական օրենսգրքի **18-րդ** հոդվածի **4-րդ** մասի **3-րդ** կետին եւ **25-րդ** հոդվածի **2-րդ** մասի **7-րդ** կետին, որոնցով բարեգործական կազմակերպություններին արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել եւ ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել, ինչպես նաև նախընտրական հիմնադրամներում մուծումներ կատարել.

բ) «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի **3-րդ** հոդվածի **2-րդ** մասին, ըստ որի՝ բարեգործություն չի համարվում նաև կուսակցություններին եւ առեւտրային կազմակերպություններին (բացառությամբ առողջապահության բնագավառի կազմակերպությունների) դրամական եւ այլ նյութական միջոցների հատկացումը:

4) բարեգործության իրականացման սկզբունքները լրացնել «շահադիտական նպատակների բացառումը» սկզբունքով, որը բխում է բարեգործության էությունից եւ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասից, ըստ որի՝ բարեգործությունը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից օրենքով նախատեսված նպատակների իրականացման համար ֆիզիկական անձանց, առողջապահական եւ ոչ առեւտրային կազմակերպություններին կամավոր, անշահախնդիր, օրենքով չարգելված (անհատույց կամ արտոնյալ պայմաններով) նյութական եւ հոգեւոր օգնության տրամադրումն է՝ :

5) առաջնորդվելով բարեգործության իրականացման սկզբունքներով, որոնք սահմանված են «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում՝ առաջարկել արգելել բարեգործության հետ միաժամանակ նախընտրական քարոզչություն, հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչություն կատարելը եւ նմանատիպ դրույթ սահմանել նաեւ ՀՀ ընտրական օրենսգրքում⁵ :

6) առաջարկել ի թիվս պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, որոնք ըստ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի չեն կարող լինել բարեգործական կազմակերպության հիմնադիրներ, ավելացնել Ազգային ժողովի պատգամավորներին, համայնքների ղեկավարներին եւ ավագանիների անդամներին, ինչպես նաեւ կուսակցություններին, նրանց ղեկավարներին եւ մշտապես գործող ղեկավար մարմինների անդամներին՝ դրանով նպաստելով բարեգործական եւ քաղաքական գործունեության տարանջատմանը⁶ :

7) սահմանել, որ բարեգործական կազմակերպությունը չի կարող իր միջոցները ծախսել եւ իր գույքն օգտագործել կուսակցությունների աջակցության, ինչպես նաեւ նախընտրական հիմնադրամների ֆինանսավորման եւ (կամ) այլ կերպ քաղաքական քարոզչություն իրականացնելու նպատակով, դրանով կատարելով եւս մեկ քայլ բարեգործական եւ քաղաքական գործունեության տարանջատման ուղղությամբ⁷ :

Օրինագծերի փաթեթի մշակմանը մասնակցել է հասարակական հիմունքներով իմ օգնական Երվանդ Դալլաքյանը:

1 Տես՝ «ՀՀ ընտրական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:

2 Տես՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:

3 Տես՝ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ

կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված:

4 Տես՝ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված:

5 Տես՝ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդված:

6 Տես՝ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված:

7 Տես՝ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդված: